

**«Արցախբանկ» ՓԲԸ
գործադիր մարմնի/Վարչության գործունեության գնահատում**

«Արցախբանկ» ՓԲԸ գործադիր մարմնի/Վարչության գործունեության գնահատումը կատարվում է՝ ելնելով Բանկի գործունեության կիսամյակային ցուցանիշներից:

Գնահատման ցուցանիշների հաշվարկը կատարվում է Ներքին աուդիտի կողմից և կիսամյակային կտրվածքով ներկայացվում է Խորհրդի քննարկմանը:

Գնահատման հիմքում ընկած են հետևյալ ցուցանիշները.

- Բանկի ֆինանսական գործունեության արդյունավետություն,
- ակտիվների որակ,
- հաճախորդների բազայի կայունություն,
- կառավարման որակ:

Ընդ որում, յուրաքանչյուր ցուցանիշի գնահատման մեթոդաբանությունը, մասնավորապես՝ ցուցանիշների հաշվարկում ներառվող տարրերի հարաբերակցությունները և դրանց միջակայքերը, վերանայվում են տարին մեկ անգամ, մինչև նոր ֆինանսական տարվա սկիզբը: